ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՆԵՐԿԱ ԳՏՆՎԵՑ ՎԵՍՉԵՍՏՐԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ

Վերջին երկու ամիսների ընթացքում, առաջին անգամը լինելով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը դուրս եկավ իր առանձնատնից՝ ներկա գտնվելու եկեղեցու օծման արարողությանը և բաժանելու իր սիրեցյալ ժողովրդի ուրախությունը:

Դեկտեմբերի 6-ին Նորին Սրբությունը մեկնեց Վեսչեստր /Նյու Յորքի արվարձան/, ուր ներկա գտնվեց Ս. Գրիգոր Լուսավորիչ Նորակառույց եկեղեցու օծման հանդիսավոր արարողությանը:

Նորին Սրբությանը ողջունեցին ԱՄՆ-ի Արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը և Վեսչեստրի քաղաքապետը: Խաժակ Սրբազանը քարոզի սկզբում փառք և գոհություն առաքեց առ Բարձրյալն Աստված, որ Ամենայն Հայոց Վեհափառն իր առողջությունն ամբողջությամբ վերագտնելու ճանապարհին է և ներկա է եկեղեցու օծման արարողությանը:

Վերջում, Նորին Սուրբ Օծությունը ներկա հավատավոր հայորդիներին հղեց իր հայրական օրհնությունն ու հայրապետական պատգամը: Ներկաները Հայոց Հայրապետին դիմավորեցին հոտնկայս և բուռն ծափահարություններով:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ